ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Գրականագիտությունը գիտակցության կարևոր արտահայտություններից է, այն ընդգրկում է ոչ միայն գեղարվեստական խոսքն իր ամբողջ բարդությամբ, այլև հասարակական շարժումներն ու ժամանակը: Սխալ է երբեմն լսելի այն կարծիքը, թե գրականագիտությունը գեղարվեստական գրականության կցորդն է և սպասարկուն: Իր թերի դրսևորումներում՝ գուցե, բարձրակարգում՝ ոչ: Վերջինս է բուն-իսկական գրականագիտությունը, որը չի ստրկանում գեղարվեստական տեքստի տառ ու բանին և կատարում է խորագնա, տարածական ընդհանրացումներ նաև վերլուծվող տեքստից «դուրս», ինքն էլ դառնալով յուրահատուկ ստեղծագործություն: Այս մակարդակի գրականագիտական աշխատանքներն երբեմն ընթանում են գեղարվեստական երկի առջևից, կատարելով գրականության զարգացման ճանապարհին մեկնաբանի կարևոր դերը: Այդպիսիք քիչ են, ինչպես որ սակավ են իսկական գրողները գիր անողների հոծ բազմության մեջ:

Այսօր հայ գրականագիտությունը՝ գրականության պատմության, տեսության ու գրաքննադատության ճյուղերով, զարգացման որոշակի միտում ունի՝ անցյալից ներկային և այստեղից դեպի վաղվա օրը: Սա հեղաշրջում չէ, գիտենք՝ արվեստի ու գրական մշակույթի ասպարեզում ոչ մի հեղաշրջում, առավել ևս հեղափոխություն, երկար կյանք չի ունեցել, բռնկվել է (հաճախ արհեստականորեն) և մոխրացել, զորօրինակ՝ ֆուտուրիզմը, և տարբեր իզմեր, մեր օրերում կեղծ նորամուծությունների շարքին կարելի է դասել Չարենցի անվան շուրջ հեռու ափերում և նաև մեր մոտ գրվող ստահոդ մտային վարժանքները: Այդ ամենը Չարենցի խոսքերով ասած հետևյալն է. «Չնչին, ինչպես Արարատին նետված քար»: Մինչդեռ շարունակությունն է՝ լավագույն հնի նորացման ու հարստացման նպատակաուղղվածությամբ: (Նա, ով սկսում է զրոյից, հանգում է զրոյին): Այս շարունակական բնույթը մեր արդի գրականագիտության ուժեղ կողմն է: Գնահատելի է նաև արդի գրականագիտության որոշակի շրջվածությունը 20-րդ դարի արևմտյան տեսական մտքին ու վերլուծաբանությանը, որ նախորդ շրջափուլերում գրեթե բացակայում էր: Սա նոր մակարդակի նշան է՝ հայոց գրականությունը դիտել միջազգային չափանիշներով, որն, իհարկե, դեռ երկար ճանապարհ պիտի անցնի՝ դառնալու

դպրոց, ուրույն հայեցակարգ և գիտական մշակույթ: Գրականագիտությունն աստիճանաբար ապաքինվում է խորհրդային կարծրացած մտածելակերպից. «գաղափարական» հին հիվանդություններից և վերլուծաբանում թե՛ դասական և թե՛ արդի գեղարվեստական խոսքի խորքային շարժումները, ձգտում ճշմարտության, վերջնականապես թոթափում կուսակցականությունը, որ ժամանակին քիչ ավերածություններ չգործեց, և առավել մոտենում իր ճշմարիտ կոչումին՝ գիտությանը:

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի և Հայաստանի գրողների միության կողմից 2004 թվականին հիմնադրված «Գրականագիտական հանդես»-ը նպատակ ուներ նպաստելու մեզանում գրական մտքի զարգացմանն ու նորացմանը: Այսօր էլ դա առաջնահերթ խնդիր է: Ցավոք սրտի, հանդեսի պարբերականության ծրագիրը՝ տարեկան հրատարակել առնվազն երկու հատորյակ, չիրականացավ, և ոչ թե նյութերի սակավության, այլ ֆինանսական պատճառով: Հանդեսի ներկայիս թողարկումը դա 2008 և 2009 թթ. միացյալ համարն է:

Ինչ խոսք, ապագայում մենք կձգտենք յուրաքանչյուր տարի, պարբերաբար, հրատարակել հանդեսի նոր համարները, որպեսզի այն ետ չընկնի արդի գրականության առաջընթացի գործառույթից, իսկ հաճախ և ինքը նոր ուղիներ հարթի:

Հանդեսը հոգածությամբ է վերաբերվելու հատկապես երիտասարդ սերնդի գրականագետներին, որոնք մեր վաղվա օրն են, նրանց շարքերում կան այսօր իսկ գնահատելի նվիրյալներ: Հանդեսն իր ուշադրության կենտրոնում պահելու է ոչ միայն հայ դասական, այլև Սփյուռքի և ժամանակակից ընթացիկ գրականության վերլուծաբանությունները՝ հնարավորինս կապված լինելով մեր գրականության արդիական պրոցեսին: Այն փորձելու է վերականգնել գնահատության չափանիշները, որոնք զգալապես խախտված են գրաքննադատության մարզում:

Բնական գիտությունների համեմատությամբ, որոնք ձգտում են աշխարհի գաղտնիքների մաթեմատիկորեն ճշգրիտ լուսաբանմանը, գրականագիտությունը զգալի չափով ազատ գիտություն է և տարընթերցումների հրապուրիչ հնարավորություն է պարունակում: Ուրեմն ժամն է խիզախել: Գնալ նորին ընդառաջ: Հանդեսի ընթացիկ համարում տպագրված հոդվածները չեն ենթարկվել մտքերի ու տեսակետների խմբագրման և արտահայտում են հեղինակների ազատ կամքը: Այդպես կլինի և այսուհետ:

«ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ»